
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՅԻՆ ԿԱՍ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ»
ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՄԼԵՏ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

1. «Յին կամ պատմական ժողովուրդների», «պատմական ազգերի» հարցին հեղինակն անդրադարձել է իր մի քանի նախորդ հրապարակումներում: Այսուհանդերձ, «հին և/կամ պատմական ժողովուրդ», «պատմական ազգ» հասկացությունները հետագա ճշգրտման կարիք ունեն. հարկավոր է հստակ սահմանել դրանց բովանդակությունը, ճշտել դրանց ծավալը և այդ նպատակով քննության առնել դրանց գործածության կոնտեքստները՝ բացառելով իսկապես վիճարկելի դեպքերը և գործածության հետ կապված անհարկի, հուզական երանգավորում ունեցող հոգեբանական զուգորդությունները (ասոցիացիաները):

– «Յին և/կամ պատմական ժողովուրդ», «պատմական ազգ» հասկացությունները գործածական են դասական բանասիրության մեջ: Որպես ինքնուրույն գիտակարգ (դիսցիպլին) այն կազմավորվեց ու առանձնացավ XVIII դ. վերջին – XIX-ի սկզբին: Բանասիրական հետազոտությունների առարկան անցյալի, հատկապես անտիկ շրջանի և միջնադարի գրական (գրավոր) հուշարձաններն են, ըստ էության՝ դրանց տեքստաբանական քննությունը՝ նպատակ ունենալով ճշտել գրավոր տեքստը, հասկանալ նրա իմաստը և տալ նրա ըստ կարելվույն համարժեք թարգմանությունը ժամանակակից լեզվական միջոցներով և իմաստային ըմբռնումներով:

– Այս է խնդիրը, և նրա լուծման համար վճռորոշ նշանակություն ունեցան բանասիրական-լեզվաբանական հետազոտությունները, որոնցով XVIII – XIX դդ. սահմանագծին սկզբնավորվեց պատմահամեմատական լեզվաբանությունը: Ուշագրավ և նշանակալից են այդ բանասիրական-լեզվաբանական հետազոտությունների առնչությունները փիլիսոփայության հետ: Ահա թե ինչ է գրել այդ մասին փիլիսոփայության պատմության դասական Վիլհելմ Վինդելբանդը. «Բանասիրական [լեզվաբանական] հետազոտությունների խորացումը XVIII – XIX դդ. սահմանագծին օգտակար եղավ նաև հին դարերի փիլիսոփայության պատմության համար, քանի որ դրանք ճանապարհի հարթեցին թե՛ բանավոր ավանդությունների քննական վերլուծությունների համար և թե՛ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության բանասիրական [լեզվաբանական]-մեթոդաբանական հիմնավորման համար»¹:

¹ **Виндельбанд В.** История Древней философии. М., 1911, с. 14. Մեջբերումներ կատարելիս հաշվի են առնված այն ժամանակվա տերմինաբանության առանձնահատկությունները:

Փիլիսոփայության հետ լեզվաբանական հետազոտությունների առնչություններին անդրադառնում է նաև լեզվաբանության պատմաբան Վլադիմիր Զվեգինցևը ավելի լայն համատեքստում: XIX դ. սկզբին լեզվաբանության պատմության ընթացքը որոշեցին երեք գործոններ, ասում է Զվեգինցևը: Դրանք էին՝ պատմականության սկզբունքը, որը լեզվաբանության մեջ թափանցեց փիլիսոփայությունից, սոցիոլոգիայից և իրավագիտությունից (ամեն դեպքում էլ կարելի էր ասել՝ փիլիսոփայությունից, որովհետև և՛ սոցիոլոգ Օգյուստ Կոնտը, և՛ լեզվաբան Վիլհելմ Յունբուլդը փիլիսոփաներ են), ռոմանտիզմի գաղափարախոսությունը (որի կրողներն էին փիլիսոփաներ Ֆրիդրիխ Շլեգելը և Ֆրիդրիխ Շլայերմախերը, և որը լեզվաբանության մեջ «պայմանավորեց հետաքրքրությունը ազգերի անցյալ պատմության նկատմամբ և նպաստեց կենդանի լեզուների պատմության հին ժամանակաշրջանների ուսումնասիրությանը»), և, վերջապես, սանսկրիտի՝ որպես հնդեվրոպական «մայր լեզվի», ուսումնասիրությունը²:

– Այս լույսի տակ միանգամայն բնական էր և օրինաչափ, որ կազմավորվող հնդեվրոպական լեզվաբանության հետաքրքրությունների շրջանակում հենց սկզբից հայտնվեց հայերենը: «**Հնդեվրոպական կենդանի լեզու իր հին պատմությամբ**» հատկանիշով հայ ժողովուրդը, որպես այդ լեզվի կրող, դասվեց հին և/կամ պատմական ժողովուրդների շարքում, և դա խթանեց հետաքրքրությունը հայերենի տևական պատմական էվոլյուցիայի, նաև՝ հայ ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ:

Լեզվաբան գիտնականի համար հայերենը բացառիկ է նրանով, որ հազարամյակների ընթացքում այն վկայված է դար առ դար, բազմաթիվ գրավոր հուշարձաններով, որոնք ներկայացնում են նրա հաջորդական փուլերը և նրա գործառույթը տարբեր մշակույթների ու հասարակությունների, տարբեր քաղաքակրթությունների հերթագայության մեջ՝ անընդմեջ կերպով, մինչև արդիականություն: Սրանից առաջ մեկ ուրիշ տեղում ես արդեն ճշել եմ այս հանգամանքը³ և դրան հարակից մի քանի ուրիշ հանգամանքներ, որոնք կարևորեցին հայերենի, որպես հին լեզվի, պատմաբանասիրական հետազոտությունները:

– Հայերենի հետազոտությունը հնարավորություն ընձեռեց պատկերացում կազմելու նաև այլ ժողովուրդների ու տարբեր մշակույթների մասին, որոնց հետ առնչվել, հարաբերվել է հայ ժողովուրդը հազարամյակների ընթացքում:

Այստեղ առանձնանում են երկու շերտեր: Մեկը կարելի է անվանել իմպլիցիտ շերտ. հայերենի մեջ՝ նրա բառապաշարում, անվանումներում (օճոմաստիկայում), դարձվածքներում, այլևայլ կայուն բառակապակցություններում և այլն, նստվածք են տվել այն ժողովուրդների կյանքի ու մշակույթի իրողությունները, որոնց հետ առնչվել, հարաբերվել է հայ ժո-

² Տե՛ս **Звегинцев В. А.** История языкознания XIX и XX веков в очерках и извлечениях. Часть первая. М., 1960, էջ 24:

³ Հատկանշական է, որ պատմահամեմատական լեզվաբանությանը սկիզբ դրած հենց առաջին աշխատությունների հեղինակները անմիջականորեն դիմում էին հայերենին: «Սանսկրիտի, զենդերենի, հայերենի, լատիներենի, լիտվերենի, հին սլավոներենի, գոթերենի և գերմաներենի համեմատական քերականություն», այսպես է վերնագրված Ֆրանց Բոպի (F. Bopp) աշխատությունը, որն առաջին անգամ հրատարակվել է 1832-ին (ռուս. թարգմ., հատվածաբար, տե՛ս **Звегинцев В. А.** Աշխ., էջ 30-35):

ղովուրդը: Հայերենի այդ լեզվական շերտը անգնահատելի և հարուստ նյութ է տալիս այդ ժողովուրդների մշակույթի ամբողջության⁴ պատմական վերակազմության համար:

Հայերենի մյուս՝ էքսպլիցիտ լեզվական շերտը տրված է բառարանագրության մեջ: Հայկական բառարանագրությունը սկզբնավորվել է հայ գրչության հետ՝ V դարում: Ստեղծվել է ավանդույթ՝ գրավոր տեքստին կցել բառացանկ՝ տալով անձանոթ, խրթին, օտարոտի և օտար բառերի բացատրությունը: Այս յուրատեսակ բացատրական բառարաններից բացի, հայերեն թարգմանական գրականության մեջ տրվել են օտար բառերի հայերեն համարժեքները, կամ՝ թարգմանության մեջ գործածված հայերեն բառի (տերմինի) օտար համարժեքը, իսկ շատ դեպքերում նույնպես կցել են թարգմանական բառացանկ-բառարաններ, որոնցում օտար բառերը տրվել են հայագիր տառադարձությամբ կամ էլ օտարագիր: Այս ավանդույթով հետագայում ստեղծվեցին հայկական բուն իմաստով բառարաններ՝ երկլեզվյան և բազմալեզվյան: Եթե հիշելու լինենք, թե որքան հարուստ, ծավալուն և ընդգրկուն է հայերեն թարգմանական գրականությունը, թե որքան գրական հուշարձաններ է այն պահպանել ու փոխանցել հաջորդ պատմական ժամանակաշրջաններին ու հետագա սերունդներին, ապա նորից պետք է հավաստենք, որ հայերենը անգնահատելի և հարուստ նյութ է տալիս այլ ժողովուրդների պատմության և մշակույթի պատմական վերակազմության համար: Որպես լուսաբանող օրինակ կարելի է հիշատակել հայերեն-պարսկերեն հին և միջնադարյան մեծաթիվ բառարանները և դրանց թվում՝ բժշկարանները, որոնք տերմինաբանական հսկայական նյութ են պարունակում գիտական ու գործնական շատ ու շատ բնագավառների վերաբերյալ՝ բժշկություն, մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա, դեղագիտություն, հիգիենա, դեղաբույսեր, քիմիական նյութեր և ռեակցիաներ, անասնաբուժություն, նույնիսկ պետրոլոգիա՝ թանկարժեք քարերի և ազնիվ մետաղների «բուժիչ հատկությունների» կապակցությամբ, ֆիզիոգնոմիկա և խիրոմանտիա և այլն, ընդ որում այս հսկայական նյութը վերաբերում է նաև ուրիշ հին ժողովուրդների լեզուներին, մշակույթին, պատմությանը, – ոչ միայն պարսիկների, այլև, իհարկե, արաբների, բայց նաև հույների, «հռոմեների», «ֆրանկների» և այլն, որոնք հիշատակվում են բժշկարաններում⁵:

– Հատուկ նշանակություն են ստանում հայոց լեզվի և մշակույթի մեջ պահպանված («նստվածք տված») վկայությունները պատմական ասպարեզից հեռացած ժողովուրդների մասին (հաթեր, խեթեր, լիդիացի-

⁴ «Մշակույթ» տերմինը այս տեքստում գործածվում է այնպես, ինչպես այն հասկացվում է տեսական մարդաբանության մեջ (տես, օրինակ՝ **Bidney D.** Theoretical Anthropology. New Brunswick and London: Transaction Publishers, 1996). մշակույթը ներառում է տվյալ պատմական ժամանակում մարդկային տվյալ խմբի, հանրության, ժողովրդի լեզուն, կենսապահովման և կենսագործունեության միջոցներն ու եղանակները, հանրային կյանքի կազմակերպման և կառուցվածքի ձևերը, ինչպես և դրանց վերաբերող պատկերացումները, նրանց բարոյական, զեղարվեստական բնույթի ըմբռնումները, արժեքային համակարգը, հավատալիքները, առասպելաբանությունն ու կրոնը, աշխարհըմբռնումն ու ճանաչողությունը և այլն:

⁵ Այս մասին տես Կ. Ռ. Ռուշանյանի ատենախոսությունը՝ "Лексикографический и лексикологический анализ персидско-иранских словарей 15-го – начала 19-го вв. (Армянская лексикографическая традиция)". Ер., 1987. Автореферат диссертации: Тбилиси, 1987:

ներ, փոշուզիացիներ, կապադովկիացիներ և այլն). դրանց այսպես կոչվող «մեռած լեզուների» և ընդհանրապես մշակույթների պատմական վերակազմությունը հնարավոր է դառնում հայոց լեզվի և մշակույթի մեջ պահպանված վկայությունների պատմահամեմատական քննության շնորհիվ:

– Նույնը պետք է ասել սեփական գիր ու գրչություն չունեցած ցեղերի ու ցեղախմբերի լեզուների և մշակույթի վերաբերյալ: Օրինակ, ղփչաղները (պոլովցիները) բավականին երկար պատմական ժամանակաշրջան՝ շուրջ երկու-երեք հարյուր տարի, իշխում էին հյուսիսկովկասյան և սևծովյան ափամերձ տափաստաններում, արշավում դեպի արևմուտք, ասպատակում եվրոպական երկրները և այդպես ցրվելով՝ ժամանակի ընթացքում ուծացան, ձուլվեցին տեղաբնիկ ժողովուրդների և դեպի արևմուտք արշավող ուրիշ վաչկատուն ցեղերի մեջ ու վերացան պատմության ասպարեզից: Այդ նույն տարածքներում նրանց հաջորդած նստակյաց ժողովուրդները աղքատիկ տեղեկություններ են պահպանել ղփչաղների լեզվի և մշակույթի մասին: Իսկ ահա վաղուց արդեն այդ ընդարձակ տարածաշրջանում գաղթօջախներ ունեցող հայերը, թե՛ տնտեսական-առևտրական և թե՛ քաղաքական հարաբերությունների մեջ լինելով ղփչաղների հետ, թողել են հայագիր վկայություններ նրանց մասին: Վաճառականների առևտրական գործարքների վավերագրերը, առուծախի մատյանները հարուստ տեղեկություններ են տալիս ղփչաղների լեզվի, կենցաղի, սովորույթների պատմական վերակազմության համար: Ավելին, հայերեն կազմվել է քրիստոնեական հավատի հայատառ ղփչաղերեն ձեռագիր աղոթագիրք, որը հետագայում՝ 1618 թ., տպագրվել է Լվովում⁶:

– Ուրեմն, մի մանրամասնեցում. հնուց ի վեր գիր և գրչություն ունենալու հատկանիշով «հին և/կամ պատմական» անվանվող ժողովուրդների պատմության հետազոտությունները անհրաժեշտաբար պետք է ընդգրկեն երկու օժանդակ պատմական գիտակարգեր (դիսցիպլիններ)՝ *պատմական բառարանագրություն* և մյուսը՝ *հնագրություն* (պալեոգրաֆիա): Գործածվելով ավելի քան 1600 տարի՝ հայոց գրերը, բնականաբար, ենթարկվել են արտաքին ձևափոխությունների, առաջացել են նաև գրերի «պատկերի» ձեռագրական տեսակներ, այնուհետև՝ տպագրական տառատեսակներ, օտար բառերի հայերեն գրության եղանակներ, դիակրիտիկ նշաններ, մուծվել են երաժշտական խազերի գրանշաններ և այլն: Այս ամենը կարևոր նյութեր են գրի մշակույթի և գրչության պատմության համար:

– Հարկավոր է հատկապես առանձնացնել ևս մի կարևոր հանգամանք, այն է՝ հայերենը հանդիսանում է ոչ միայն բուն Հայաստանի, Հայկական բարձրավանդակի, այլև նրան հարող մի հսկայածավալ տարածաշրջանի աշխարհագրական անունների, պատմական անցքերի ու անձերի հետ կապված իրադարձությունների տեղորոշման, դրանց ստուգաբանության, համեմատական քննության հիմնական աղբյուր հնագույն և հին պատմության համար:

⁶ Տպագրիչ՝ Հովհաննես Քարմատանենց: Այս տեղեկությունը հեղինակին տրամադրել է Հր. Ղ. Միրզոյանը:

– Ինչպես հենց սկզբում ասվեց, «հնդեվրոպական կենդանի լեզու իր հին պատմությամբ» հատկանիշով հայ ժողովուրդը, որպես այդ լեզվի կրող, դասվեց հին և/կամ պատմական ժողովուրդների շարքում, և դա խթանեց հետաքրքրությունը հայերենի տևական պատմական էվոլյուցիայի, նաև՝ հայ ժողովրդի պատմության նկատմամբ: Դրա արդյունքը եղավ այն, որ հայկական մշակույթի գրավոր հուշարձանների գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն թարգմանությունները (իրենց համահավաք տեքստերով, մեկնաբանություններով, ստուգաբանական և աղբյուրագիտական վերլուծություններով) այդ ժամանակից սկսած դարձան, և հիմա էլ շարունակում են մնալ, *իր իսկ եվրոպական* պատմաբանասիրության էական մասը: Այն ներկայացնում են նշանավոր անուններ՝ Կ. Նոյման, Մ. Բրոսսե, Է. Դյուլո-րիե, Յ. Յուրբան, Ֆ. Կոնիբեր, Կ. Կրունբախեր, Ա. Գուտշմիդ, Պ. դե Լագարդ, Վ. Լանգլուա, Յ. Գելցեր, Յ. Մարկվարտ, Ա. Մեյե և ուրիշներ, որոնց պետք է ավելացվեն նաև Յ. Տաշյանի, Մ. Ավգերյանի, Գ. Ավետիքյանի, Ն. Ադոնցի, Յ. Մանանդյանի, Ս. Մախասյանցի, Մ. Աբեդյանի և ուրիշ անուններ: Այսօր էլ, իրեն հարգող լեզվաբանը, պատմաբանը, մշակութաբանը, տեղը եկած ժամանակ, չի շրջանցում այդ սկզբնաղբյուրները, դրանց թարգմանությունները, դրանց մեկնաբանությունները, ծանոթագրությունները, ստուգաբանությունները, ազգային մշակույթի գործառույթի՝ դրանց մեջ ամփոփված պատմական փորձը (experience), նամանավանդ երբ նա շարադրում է քաղաքակրթությունների պատմություն, եվրոպական կամ ընդհանրապես արևմտյան քաղաքակրթության պատմությունը, կրոնի ու եկեղեցու պատմությունը, երբ նա գրում է անցյալի մեծ մշակույթների՝ մերձավորարևելյան, հունա-հռոմեական, հելլենիստական, վաղքրիստոնեական, բյուզանդական, Վերածննդի, միջնադարյան մշակույթ-քաղաքակրթությունների և դրանց փոխհարաբերությունների («հանդիպման» - encounters) մասին, նոր, Արևմտյան քաղաքակրթության կազմավորման, նոր մտավոր մշակույթի, ժամանակակից իմաստով՝ գիտության, ձևավորման ու զարգացման մասին և այլն:

2. Հիմա, լեզվաբանական տեսանկյունից անցնենք «պատմական ազգի», «հին և/կամ պատմական ժողովրդի» ատրիբուտների քննությանը բուն դասական բանասիրության տեսանկյունից: Ինչպես ասվեց, բանասիրական հետազոտությունների առարկան անցյալի, հատկապես անտիկ շրջանի և միջնադարի գրական (գրավոր) հուշարձաններն են, ըստ էության՝ դրանց տեքստաբանական քննությունը՝ նպատակ ունենալով ճշտել գրավոր տեքստը, հասկանալ նրա իմաստը և տալ նրա ըստ կարելիության համարժեք թարգմանությունը ժամանակակից լեզվական միջոցներով և իմաստային ըմբռնումներով:

Իհարկե, նախ և առաջ վերծանվեցին, թարգմանվեցին, մեկնաբանվեցին, ծանոթագրվեցին հին հունական գրականության դասական երկերը: Բայց գրավոր հուշարձանների մշակութային ծավալը շատ ավելի մեծ է. այն ընդգրկում է, բնականաբար, հունա-հռոմեական գրականությունը, ժամանակային առումով՝ նաև հելլենիստա-

կան մշակույթի ոլորտում հայտնված ժողովուրդների գրական ժառանգությունը⁷:

– Սակայն իսկույն ևեթ հայտնի դարձավ, որ այս հսկայական նյութի վերծանման, հասկացման, մեկնաբանության և թարգմանության խնդիրը պարզապես և միմիայն լեզվաբանական, տեքստաբանական, տերմինաբանական չէ, և որ նրա լուծումը հնարավոր է, երբ լեզվատեքստաբանական հետազոտությունները (որոնց մասին խոսվում էր վերը) զուգորդվում են պատմական և մշակութաբանական ուսումնասիրությունների հետ. յուրաքանչյուր գրական (գրավոր) հուշարձան պատկանում է որևէ մեկ պատմական ժամանակի և մի որոշակի մշակույթի, և նրա վերծանումը, հասկացումը, իմաստավորումը, ուրեմն և ըստ կարելիւյն համարժեք թարգմանությունը, հնարավոր են դառնում, երբ հուշարձանը ներառվում է (և քննության է առնվում) այդ պատմական ժամանակի և այդ որոշակի մշակույթի համատեքստի մեջ: Վ. Վինդելբանդը Ֆ. Շլայերմախերին համարում է այս ընդհանուր տեսական և մեթոդաբանական հարցադրման հեղինակը և գործնական լուծման առաջնեկը: Ֆ. Շլայերմախերն էր, որ ցույց տվեց, թե որքան սահմանափակ կլինեին միայն լեզվաբանական-տեքստաբանական հետազոտությունները, և ինքն էր, որ գործնականում ցուցադրեց անտիկ գրականության ըստ կարելիւյն համարժեք թարգմանությունը ժամանակակից լեզվական միջոցներով և իմաստային ըմբռնումներով⁸: Խոսքը վերաբերում է Պլատոնի երկերի նրա թարգմանությանը, որոնք լույս են տեսել վեց հատորով 1804-1828 թթ.: Գործից փոքրիշատե տեղյակ մեկի համար պարզ է, թե դա ինչ է նշանակում: Պլատոնի երկերի թարգմանությանը չեն օգնի ո՛չ հին հունարեն լեզվի (բառապաշարի՝ «բացատրական բառարանի», և քերականության) իմացությունը, ո՛չ էլ թարգմանական բառարանները. դրանք միայն անհրաժեշտ նախապայմաններ են: Դժվարությունն այլ է: Պլատոնի և Արիստոտելի երկերը հաջորդ սերունդներին հասած հնագույն գրավոր հուշարձաններն են, և որպես այդպիսին դրանցից յուրաքանչյուրը եզակի է, նրա վերծանումներն ու մեկնաբանությունները ելակետ, մասշտաբ են դառնում հետագա թարգմանությունների և ընդհանրապես քննական պատմագրության ու քննական բանասիրության համար⁹:

– Այստեղից է, որ ծագեց և լուծում ստացավ հաջորդ տեսական-մեթոդաբանական հարցադրումը (տրամաբանության տերմինաբանությամբ ասած՝

⁷ Փիլիսոփայության պատմությունն է լավագույնս ցուցադրում մշակութային այդ համաշխարհի (ունիվերսումի) գոյացումն ու գոյատևումը: Վիլհելմ Վինդելբանդն է այս գաղափարի սկզբնավորողը: Ահա թե ինչ է գրել նա. «Հունական փիլիսոփայությունը աճում է ինքնաբավ ազգային մշակույթի հողի վրա. այն հունական ոգու զուտ արգասիքն է: Իսկ հելլենիստական-հռոմեական փիլիսոփայությունը ենթադրում է ոգեկանի բնագավառում արդեն ավելի բարդ և ավելի տարամետ գործընթացներ, ինչի հետևանքով Միջերկրական ծովի շրջակա երկրների ժողովուրդները Ալեքսանդր Մեծի ժամանակից սկսած ստեղծում էին ազգային տարբերություններն ավելի ու ավելի համահարթեցնող-միավորող համաշխարհային մշակույթ: Այս համաշխարհային մշակույթի կազմավորման ընթացքի ավարտը ներկայացնում է, արտաքենապես, Հռոմեական պետությունը, նեքնապես՝ քրիստոնեությունը, իսկ հելլենիստական-հռոմեական փիլիսոփայությունը համահարթեցման-միավորման բուն ընթացքի կարևորագույն գործոններից մեկն էր» (տե՛ս **Виндельбанд В.** նշվ. աշխ., էջ 3):

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 8 և 14:

⁹ Այսպես է ատում, վերստին, Վինդելբանդը. տե՛ս նույն տեղը:

«հակադարձ խնդիրը»): գրավոր հուշարձանը վերծանելով ու հասկանալով, այն մեկնաբանելով ու թարգմանելով՝ մենք հնարավորություն ենք ստանում կատարել պատմական վերակազմություն՝ ներկայացնել այդ հուշարձանի կրող ժողովրդի մշակույթի ամբողջությունը (հիշենք վերը բերված օրինակները): Դեռ այդպես պատահեց, որ XIX դարում դասական բանասիրության **տեքստաբանական** հետազոտությունները օրինաչափ կերպով վերաճեցին **պատմաբանասիրական** և **պատմամշակութային** հետազոտությունների, որոնք կատարվում են բանասիրության մեջ կազմավորված առանձին դիսցիպլիններում:

– Սրա հետ առնչվող մի խիստ կարևոր հանգամանք արժեք լուսաբանել, ասենք, հետևյալ ցայտուն օրինակով: Հին հունական գրավոր ժառանգության վաղնջական շրջանի երկերը չեն հասել հելլենիստական շրջանի և միջնադարի հեղինակներին: Այդպիսին են, փիլիսոփայության մեջ, Պլատոնին նախորդած (Վինդեյլբանդի բնորոշմամբ՝ մինչսոկրատեսյան) դպրոցների գրվածքները: Եվ ահա, հնարավոր դարձավ մեզ հասած գրավոր հուշարձաններում պահպանված պատառիկների բանասիրական-տեքստաբանական, պատմաբանասիրական, պատմահամեմատական, ստուգաբանական, պատմամշակութաբանական հետազոտություններով կատարել պատմական վերակազմություն և ներկայացնել այդ դպրոցների ամբողջական նկարագիրը: Հիմա, երբ պատմաբանը հին հունական փիլիսոփայության շարադրանքը անվարան կերպով սկսում է Միլեթյան դպրոցից, ապա նա ոչ միշտ է հիշատակում, որ ներկայացվող նյութը *ամբողջովին* պատմական վերակազմության արդյունք է: Հիշենք այս հանգամանքը, այն մեզ հարկավոր կլինի հայկական գրավոր մշակույթի ընդհանուր քաղաքակրթական նշանակության մասին խոսելիս:

– Հայ ժողովրդի՝ հին և/կամ պատմական ժողովուրդ լինելու հատկանիշին որակապես նոր բովանդակություն է հաղորդում գրչություն և գրավոր գրականություն ունենալու և սերունդներին փոխանցելու հատկանիշը: Հայաստանը հնուց անտի հարուստ է եղել գրավոր հուշարձաններով. դրանք են հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի, Վանի թագավորության ժամանակի սեպագիր արձանագրությունները, այնուհետև, հելլենիզմի շրջանում, գործածության մեջ մտած հունարեն սեպագրերը: Վկայություններ կան նաև հունարեն գրված երկերի մասին: Սակայն որակապես նոր բովանդակություն ունեին հինգերորդ դարում հայերեն, մաշտոցյան գրի ստեղծումը և հայկական գրչության, գրավոր գրականության սկզբնավորումը: Գիրը, գրչությունը, մատենագրությունը իր ժամանակին նկատվում, ընկալվում էին իբրև վկայությունն ու հավաստումը այն բանի, որ գրի և գրավոր մշակույթի կրող ժողովուրդը պատկանում է քաղաքակրթության աշխարհին: Դասական անտիկ շրջանում այն գիտակցվում էր որպես հունա-հելլենիստական մշակույթի ընդգրկման և ազդեցության ոլորտը, ուշ հելլենիզմի և վաղ միջնադարի ժամանակներում՝ որպես հունա-հելլենիստական մշակույթի և կրթության զուգորդումը քրիստոնեության հետ Զոռմեական (ապա՝ Բյուզանդական) կայսրության մեջ և նրա ազդեցության ոլորտում: Դրանից դուրս գտնվող աշխարհը համարվում, գիտակցվում էր որպես խորթ, այլամշակութային աշխարհ, բարբարոս աշխարհ¹⁰:

¹⁰ Դրա հրաշալի բնութագրությունը տվել է Ս. Ս. Ավերինցևը (տե՛ս **Аверинцев С. С. Византия и Русь: Два типа духовности** // “Новый мир”, 1988, № 7, էջ 213-214):

Ստեղծելով սեփական գիր և գրչություն, ապշեցուցիչ կարճ ժամանակում՝ հայագիր թարգմանական և սեփական հարուստ գրականություն՝ հայ ժողովուրդը հավասարը հավասարի պես երկխոսության մեջ մտավ ժամանակի քաղաքակիրթ ազգերի հետ՝ ապահովելով և ամրապնդելով իր ազգային ինքնության գիտակցությունը և ամուր հիմք ստեղծելով անկախ պետականության գաղափարախոսության համար, քրիստոնեական աշխարհում հայ եկեղեցու ինքնուրույնության ապահովման համար: Ընդդիմությունը Սասանյան Պարսկաստանին և զրադաշտականությանը ցուցադրեց նրա կողմնորոշումը դեպի հունա-հելլենիստական մշակույթի աշխարհը, որի մեջ նա մտավ ու մնաց իր գրավոր մշակույթով ու նաև՝ իր պատմությամբ, շինարարական-ճարտարապետական արվեստով, գեղարվեստով և այլն:

Ուրեմն, «իին և/կամ պատմական ժողովուրդ» լինելու էական հատկանիշներից (ատրիբուտներից) մեկը նաև պատկանելությունն է պատմականորեն գոյություն ունեցած մշակութային-քաղաքակրթական հանրությանը (համաշխարհին):

– Ոչ միայն և ոչ թե պարզապես գիր, այլ գրավոր մշակույթ, գրականություն ունեցող ժողովուրդներին բնորոշ են մի քանի առանձնահատկություններ:

Ամենից առաջ, դա հանրային կյանքի իրավաքաղաքական և պետաիրավական կարգավորումն է¹¹, պետականություն ունենալն է, որի շնորհիվ կազմավորվում են և էթնիկական-ազգագրական մշակույթի բազմազանության վրա բարձրանում են մշակույթի վերին՝ այսպես ասած *քաղաքակրթական*՝ արդեն ընդհանրական՝ շերտի ձևերը, այդ թվում՝ էթնիկական-բարբառային բազմազանության վրա բարձրացող ընդհանուր գրական լեզուն և ազգային մշակույթի շարունակականությունն ապահովող գիտակրթական համակարգը, ինչպես և հանրային կյանքի կազմակերպման ավանդական՝ սովորութային-բարոյական ձևերի ազգագրական բազմազանության վրա բարձրացող՝ հասարակական կյանքի կազմակերպման նույնպես ընդհանրական իրավաքաղաքական ձևերը: Մշակույթի վերին՝ քաղաքակրթական շերտի ընդհանրական ձևերի առկայությունն է, որ ժողովրդին դարձնում է ազգ, բնութագրում է ազգը որպես միասնական հանրություն և նրա մշակույթը՝ որպես ազգային մշակույթ: *Հենց դրանք էին գրավոր մշակույթի կրողները՝ այն երկրներում, որտեղ կային ավաններ, քաղաքներ (պոլիսներ), ամրոցներ, տաճարներ, վանքեր, որովհետև միայն այդտեղ էր հնարավոր, որ լինեին ու գործեին գրչատներ (սկրիպտորիումներ), գրապահոց-մատենադարաններ՝ գրչագիր մատյանների ապահով պահպանության համար և հանրային ու հոգևոր կարիքներով դրանց գործածության համար*¹²: Այդպես է, որ ժողովրդի բնակության աշխարհագրական տարածքը դառնում է «իր պատկերով ու

¹¹ Հետաքրքրական է, որ իրավունքի տեսության և պատմության նշանավոր մասնագետ Վ. Ս. Ներսեսյանցը Հին Հունաստանում պետականության գոյությունը տանում է շատ հեռու անցյալ՝ մ. թ. ա. առաջին հազարամյակի սկիզբը՝ նկատի ունենալով հունական պոլիսները որպես պետականության իրական ձևեր (տես "История политических и правовых учений". М., 2001, էջ 34):

¹² Հայաստանում հելլենիստական մշակույթի և քաղաքական հաստատությունների մասին տես տողերիս հեղինակի "Национальная культура с точки зрения философии истории" գրքում, հատկապես՝ էջ 85-87:

նմանությամբ» կերտված հայրենիք: Դա արդեն քաղաքակրթության որակապես տարբեր մակարդակ էր, և, նորից կրկնենք, ահա թե ինչու դրանից դուրս գտնվող աշխարհը համարվում, գիտակցվում էր որպես խորթ, այլամշակութային աշխարհ, բարբարոս աշխարհ, որից անընդհատ գալիս էր ասպատակելու, գրչագիր մատյանները հրո ճարակ դարձնելու սպառնալիքը¹³:

Գրավոր մշակույթի, գրականության կողմ ժողովրդի հայրենիքի այս նկարագրությունը, ինչպես տեսնում ենք, նաև հենց Հայաստանի տիպական պատկերն է, նրա պատմամշակութային «քարտեզը», ինչպես այն և ներկայանում էր հունա-հելլենիստական և վաղքրիստոնեական ժամանակներից ի վեր:

Հայ ժողովուրդը, որպես ազգ կազմավորվելով հնագույն պետականությունների մեջ, շարունակեց իր անընդմեջ պատմական ընթացքը իր հայրենիքում, իր գրի, գրչության, գրավոր գրականության տարածքում, քաղաքակրթություն-մշակույթների (անտիկ, հունա-հռոմեական, վաղքրիստոնեական ու միջնադարյան, Վերածննդի, ուշ միջնադարյան) հերթագայության շղթայում: Նա պահպանեց ու իր հետ բերեց մշակութային ժառանգությունը և, դրա հետ մեկտեղ, հավասար երկխոսության մեջ էր մտնում ուրիշ քաղաքակիրթ ազգերի հետ, քանի որ ծավալում էր իր կարողականությունները ժամանակի քաղաքակրթության բոլոր ձևերի մեջ:

– Մշակութային-քաղաքակրթական այդպիսի կենտրոնները մի քանիսն էին (օրինակ՝ պարսկականը, մի խիստ ուրույն մշակույթ-քաղաքակրթություն, որի մասին խոսվեց վերևում): Իսկ ինչով է առանձնանում հունա-հելլենիստական մշակույթի ընդգրկման և ազդեցության ոլորտը, որին հարեց Հայաստանը իր մշակույթով, և որը բախտորոշ եղավ նրա համար:

Արևմտյան քաղաքակրթության պատմության հեղինակները, մասնավոր դեպքերում՝ փիլիսոփայության, գիտության, գրականության և արվեստի պատմաբանները, հետադարձ հայացքով հունա-հելլենիստական և հռոմեական քաղաքակրթության, նրա արժեքային կողմնորոշումների և նրա պատմական հետագա ընթացքի մեջ տեսնում են Արևմտյան քաղաքակրթության սկզբնավորումը և ծավալման, թելուզ և բարդ ու դժվարին, ճանապարհը: Սակայն, բնականաբար տարբեր են պատկերացումները այդ մշակույթ-քաղաքակրթության ընդգրկման ու զարգացման ընթացքի վերաբերյալ: Գ.Վ.Ֆ.Յեզեչի «Փիլիսոփայության պատմության դասախոսությունները» միանշանակ կերպով ցուցադրում են Արևմտյան փիլիսոփայության, և ընդհանրապես հոգևոր ու մտավոր մշակույթի, ժառանգորդումը հին հունական և հունա-հռոմեական ավանդույթից. Արևմտյան փիլիսոփայությունը, և ընդհանրապես հոգևոր ու մտավոր մշակույթը, պատմության ընթացքում այդ ավանդույթի ներքին կարողականությունների (պոտենցիալի) ծավալման արգասիքն է: Կարելի էր թվարկել հոգևոր ու մտավոր մշակույթի՝ գիտության, գրականության, գեղարվեստի տարբեր ճյուղերի պատմության բազմաթիվ շարադրանքները՝ նույն գաղափարով և կաղապարով: Իսկ պատմաբանները, որպես կանոն, առաջնային մշակություն են տալիս դասական անտիկ աշխարհի ոչ այնքան մշակու-

¹³ Հիշենք Թունանյանին. «...Բայց քանի անգամ շեկ անապատի օրդունները սև // Իրարու ետև // Եկան, զարկեցին...»:

թային, որքան հասարակական-քաղաքական, պետաիրավական ժառանգությանը¹⁴: Իհարկե, Արևմտյան քաղաքակրթությունը պատմականորեն որակապես նոր աստիճան է, բայց նա ներկայացնում է պատմության ընթացքի այն վեկտորը, որը սկիզբ է առել Հին Հռոմից, – այս տեսակետն են դավանում XIX – XX դդ. նշանավոր պատմաբաններ Լեոպոլդ ֆոն Ռանկեն «Նոր պատմության դարաշրջանների մասին» դասախոսություններում, որ նա կարդացել է Բավարիայի թագավորին, Թեոդոր Մոմզենը՝ «Հռոմի պատմությունը» ստվար եռահատորյակում, Առնոլդ Թոյնբին՝ «Պատմության հետազոտություն» պատմափիլիսոփայական երկում (Օքսֆորդյան հրատարակությունը՝ տասը հատորով) և այլն:

– Ինչպես ցույց են տալիս հայոց պատմության փաստերը, Հին Հայաստանը տիպական հունա-հելլենիստական մշակույթի երկիր էր, նա այդպիսին եղավ նաև հանրային կյանքի պետաիրավական օրինակարգման ոլորտում. «Կանոնագիրք Հայոց»-ը, հայկական «դատաստանագրքերը» կառուցված չեն հռոմեական պետաիրավական կաղապարներով: Եվ առհասարակ հայոց պատմության մեջ քաղաքական կողմնորոշումները (որոնք միշտ էլ փոփոխական են), *որպես կանոն*, չեն կաշկանդել նրա մշակութային կյանքի ընթացքը, նրա մշակութային կողմնորոշումները և մշակույթի արժեքային համակարգը:

3. Այսքանից հետո կարելի է թվարկել հայկական գրավոր մշակույթի ընդհանուր քաղաքակրթական նշանակությունը բնութագրող մի քանի հանգամանքներ.

- Անփոխարինելի նշանակություն ունեցավ հայերեն **թարգմանական** գրականությունը: Հին հունական դասական գրականության և հելլենիստական շրջանի երկերի, վաղքրիստոնեության ժամանակաշրջանի, եկեղեցու հայրերի աշխատությունների թարգմանությունները և հենց Աստվածաշնչի հնագույն թարգմանությունը, պատմահամեմատական մեթոդի տեսակետից, բնօրինակներին համարժեք նշանակություն ձեռք բերեցին, այդպիսին են նաև քրիստոնեական դավանաբանության և կրոնափիլիսոփայության համար էական մի ամբողջ շարք աշխատություններ, որոնք պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Հանրահայտ է Փիլոն Ալեքսանդրացու օրինակը¹⁵, որի զգալի թվով գրվածքներ պահպանվել են միայն հայերեն. դրանք եզակի են ոչ միայն քրիստոնեական դավանաբանության, այլև առհասարակ հին հունական փիլիսոփայության պատմության լուսաբանման համար (Պյութագորաս, Պլատոն, ստոյիկներ):

¹⁴ Մանրամասնությունները այստեղ չեն նշի, բայց թե որքան խորն է նստած այս գիտակցությունը Արևմտյան քաղաքակրթության մեջ, դրանում կարելի է համոզվել, իսկապես, շոշափելի, տեսանելի օրինակով. ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնը հղացվել է և ներկայանում է որպես Հին Հռոմի դասական իդեալի մարմնավորում իր Կապիտոլիումով ու Սենատով, պետական հաստատությունների շենքերի հոյակապ ճարտարապետությամբ, ճակատների հարդարանքով և լատիներեն արձանագրություններով, հուշակոթող-սյուներով. «ամերիկյան պետության և սահմանադրության հայրերը», որոնք երդվյալ հանրապետականներ են եղել, չէին խուսափում անկախ նահանգների միության մասին խոսելիս ինչ-ինչ դեպքերում նույնիսկ «կայսերական» տերմինը գործածելուց (Empire Day, Empire State, Empire Building etc.):

¹⁵ Տե՛ս **Вардазарян О. С.** Филон Александрийский в восприятии армянского средневековья. Ер., 2006:

- Հայկական գրավոր մշակույթը, իր ստեղծման պահից ի վեր, ամբողջ քաղաքակիրթ աշխարհին ներկայացավ ժամանակի գիտակրթական գրականության բոլոր ճյուղերին վերաբերող երկերով, ընդ որում և՛ ինքնուրույն գործերով, և՛ մեծ թվով **մեկնողական** գրականությամբ: Այս ավանդույթը շարունակվեց մինչև ուշ միջնադար: Առանձնապես մեծ տեղ ունեն Աստվածաշնչից քաղված բնաբանների մեկնությունները, քանի որ աստվածաբանական քննարկումների կենտրոնում գտնվող բազմաթիվ հարցեր առնչվում են փիլիսոփայական-իմացաբանական հիմնահարցերին¹⁶:

- Հայկական ժամանակագրությունները, Հայոց և ընդհանուր պատմությունները լայն ճանաչում են գտել եվրոպական նոր լեզուներով կատարված բազմաթիվ թարգմանությունների շնորհիվ. դրանք հիրավի կազմում են ընդհանուր պատմագրության և պատմագիտության էական մասը:

Փիլիսոփայական պատմագրության տեսանկյունից միանգամայն ինքնուրույն նշանակություն ունի անտիկ և միջնադարյան փիլիսոփայության դասականների *ներկայացումը* հայ միջնադարյան փիլիսոփայական տեքստերում: Խոսքը պարզապես այդ դասականների նկատմամբ հայ միջնադարյան մտածողների վերաբերմունքի մասին չէ, այլ հարցի մեկ ուրիշ կողմի՝ ուղիղ իմաստով ներկայացման մասին: Հայ միջնադարյան փիլիսոփայական տեքստերում հանդիպում են դասականների երկերի նկարագրություններ, վերարտադրություններ, բովանդակության վերաշարադրանքներ և այլն, որոնք դեռևս քիչ են օգտագործվում աղբյուրագիտական հետազոտությունների մեջ: Ահա մի ցայտուն լուսաբանող օրինակ. Դավիթ Անհաղթը տվել է Արիստոտելի գրվածքների («շարագրութեանց») լրիվ դասակարգումը իր «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատության պրակ Դ.-ում և Ե.-ում: Սա հնուց եկող մի դասակարգում է, որը սկզբնաղբյուրի արժեք ունի, եթե նկատի ունենալու լինենք ժամանակը (V-VI դդ.): Այդ դասակարգումը տողերիս հեղինակը վերարտադրել է ակնառու ձևով, ծառի տեսքով¹⁷: Հարկ չկա ապացուցելու, թե ինչ կարևոր նշանակություն ունի Դավթից բերված հատվածը առհասարակ արիստոտելագիտության համար (նամանավանդ, որ այս աղբյուրը՝ Դավթի «Մեկնութիւն Ստորոգութեանցն»-ը, հունարեն տարբերակով շրջանառության մեջ է եղել ամբողջ միջնադարում): Սա միայն մեկ լուսաբանող օրինակ է, որով կարելի է տեսնել, թե ինչ նոր հնարավորություններ են բացվում փիլիսոփայական աղբյուրագիտության համար, եթե նույն տեսանկյունից աչքի անցկացվի հայ ամբողջ միջնադարյան փիլիսոփայական գրականությունը¹⁸, կցուցադրվի հայ

¹⁶ Այս հանգամանքը մասնավորեցնելով Հովհան Ռոտմեցու օրինակով՝ Ա. Մինասյանը գրում է, որ «աստվածաշնչական բնաբանների սբ. Հովհան Ռոտմեցու մեկնությունները միջնադարի իմաստասիրական և աստվածաբանական հարստություններն իրենց մեջ ամբարած, տեսական արժեք ունեցող աշխատասիրություններ են...» (տես **Հովհան Ռոտմեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, Էջմիածին, 2009, Առաջաբան, էջ 31):

¹⁷ Տես «Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ», Բաժին Ա., 01:

¹⁸ Նման մի հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել Գևորգ Գրիգորյանը՝ նկատի ունենալով Փիլոն Ալեքսանդրացու անձի և աշխատությունների մասին հայերեն աղբյուրներում եղած բավականին հարուստ տեղեկությունները, որոնք անվանված են «սկիզբն և պատճառ գրոցն Փիլոնի» (տես **Գ. Գրիգորյան**, Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները// Բանբեր Սատենադարանի, 1960, № 5, էջ 98):

փիլիսոփայական ժառանգության ներքին հարստության ևս մեկ կողմը և կշահի նրա վարկը փիլիսոփայության ընդհանուր պատմագրության մեջ:

4. Վերջում հարկավոր է հիշեցնել, որ մշակութային մարդաբանության տեսանկյունից ամեն մի մշակույթ հավասարապես ինքնուրույն արժեք է, աշխարհընկալման, աշխարհըմբռնման մի եզակի մարմնավորում: Ուստի, ոչ թե մշակույթների, այլ հասարակությունների մասին խոսելիս կարելի է ասել, եթե գործածելու լինենք Ա. Կոյրբերի տերմինները՝¹⁹ «ավելի հետ մնացած (retarded)» կամ «ավելի առաջանցիկ (advanced) հասարակություն»: Այս վերապահումով է տրված հետևյալ դրույթը.

- «Ավելի հետ մնացած (retarded) հասարակությունների» մշակույթը «վերարտադրողական» (reproductive) է, և գոյատևելու համար այն պարտավոր է այդպիսին լինել՝ իր կարողականություններն օգտագործելով իր ավանդութային-սովորութային մշակույթի պահպանության, կրկնության, վերարտադրության համար.

- այնինչ «ավելի առաջանցիկ (advanced) հասարակությունների» մշակույթը զարգացող, արգասավոր (productive) մշակույթ է, և որպես այդպիսին, որպես առաջանցիկ (advanced) գոյատևելու համար այն պարտավոր է իր կարողականությունները ծավալել յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանի մշակույթի նոր ձևերի մեջ՝ լցնելով ամբողջ «մշակութային տարածությունը»:

Հենց այսպիսին է հայկական մշակույթը իր պատմական ընթացքի մեջ:

ГАМЛЕТ А. ГЕВОРКЯН - *Замечания о понятии "древние или исторические народы"*. - Употребление терминов “древний или исторический, народ”, “историческая нация” восходит к новой классической филологии, сложившейся в начале XIX века. Эти термины нуждаются в уточнении: следует определить содержание обозначаемых ими понятий, четко обозначить их объем. Для этих целей в статье выделяются и рассматриваются конкретные контексты их употребления в научной литературе, исключаются необоснованные случаи и неуместные, эмоционально окрашенные психологические ассоциации.

В становлении новой классической филологии и сравнительно-исторического языкознания определяющую роль сыграла философия романтизма, “обусловившая интерес к национальному прошлому и способствовавшая изучению древних периодов развития живых языков” (В.А.Звегинцев). Именно по этому атрибуту – “живой индоевропейский язык, засвидетельствованный с древности”, – в сравнительно-историческом языкознании возник интерес к армянскому языку и к историческому прошлому армянского народа – носителя этого языка.

Предмет филологических исследований – литературные (письменные) памятники, особенно античности и средневековья, по существу – текстологический анализ, а именно понимание (Verstehen) текста, прояснение и уточнение смысла содержащихся в нем утверждений, их интерпретация, для того чтобы дать по возможности адекватный перевод на современный язык, с его особенными (отличными) языковыми средствами выражения и особенной семантикой.

¹⁹ St'u **Kroeber A. L.** The Nature of Culture. New Brunswick and London: Univ. of Chicago Press, 1987, p. 153:

Решить эту задачу, однако, непросто. Каждый памятник культуры и памятник письменности уникален. Он осмыслен в контексте одной определенной культуры и определенного исторического времени. Только “помещенный” в этот контекст, он становится доступен для понимания и перевода. И потому в XIX веке филологические-текстологические исследования необходимым образом переросли в историко-филологические и историко-культурологические. Понимание, истолкование, перевод письменных памятников позволили решить также и “обратную задачу”: через историческую реконструкцию представить целостность культуры народа – носителя этих памятников. В статье эти обстоятельства демонстрируются на примере армянского языка. В нем образовался и сохранился целый пласт, в котором отложились сведения о племенах и народах, с которыми общался армянский народ на протяжении веков, начиная с глубокой древности. В их числе есть народы, сошедшие с исторической арены (хетты, лидийцы, фригийцы, каппадокийцы и др.), а также племена, не имевшие письменности. Армянские письменные источники и сведения, отложившиеся в армянском языке, становятся важным средством при исторической реконструкции целостности культуры этих народов.

В филологии XIX в., естественно, были переведены на новоевропейские языки в первую очередь памятники греко-римской литературы. Однако те же мотивы, которыми побуждался интерес к такому выбору, обусловили интерес и к армянскому литературному наследию (и, соответственно, к истории Армении и к армянской культуре). В статье указывается ряд обстоятельств, характеризующих общекультурное значение армянского литературного наследия. Это обширная переводная литература на армянском языке: переводы сочинений классической античности, эпохи эллинизма, памятников греко-римской литературы, писаний раннехристианских авторов и т.п. Многие из этих переводов являются уникальными в мировой литературе, а некоторые сочинения античных и раннехристианских авторов сохранились только в древнеармянских переводах и имеют значение оригинала. Это и труды по всем отраслям тогдашней учености – от грамматики до математики, космографии, теории календаря. Это и многочисленная герменевтическая литература: толкования классических сочинений по философии, логике, теологии, св. Писания. Это и труды по истории Армении и всеобщей истории. Вся эта литература имеет исключительное значение для сравнительно-исторических исследований, без которых не могут обойтись филологические дисциплины. И совершенно естественно, что на новоевропейские языки (немецкий, французский, английский) была переведена почти вся эта обширная литература. Переводчиками были выдающиеся представители филологии XIX-XX вв., изучившие и знавшие армянский литературный язык и, конечно же, историю Армении и армянскую культуру. Вся большая “библиотека” переведенной с армянского литературы (с их комментариями, интерпретациями, указателями, этимологией и т.п.) стала составной частью, собственным достоянием самой европейской филологии.

Литературные памятники сообщают качественно новое звучание атрибуту “древний или исторический народ”. Народ, имеющий письменность и собственную литературу по всем областям учености своего времени, признавался принадлежащим к “миру цивилизации”, к некоторому универсуму. Мир, пространство, вне него находящийся, признавался, осознавался как мир вар-

варский, даже как “не мир” (С. Аверинцев). Создал собственную письменность и собственную переводную и оригинальную богатую литературу, армянский народ на равных вступил в диалог с цивилизованными народами. Воспротивление Сасанидской Персии и зороастризму определило его ориентацию на мир (универсум) греко-эллинистической культуры, в который он вступил и в котором он оставался своей литературной культурой, как и своей историей, строительным искусством и архитектурой, художественной культурой...

Статья завершается тезисом, ограничивающим область применимости понятий “древний или исторический народ”, “историческая нация” (в формулировках используется терминология А.Крёбера):

Культура отставших (retarded) обществ репродуктивна, и для своего выживания она обязана быть таковой: использовать свои внутренние возможности для сохранения, защиты, воспроизводства своей традиционной, обычно-правовой формы;

культура прогрессирующих (advanced) обществ является развивающейся, продуктивной, и для своего выживания в качестве таковой она обязана развернуть свои внутренние возможности в формах культуры каждой последующей эпохи, заполнив собой всё “культурное пространство”.

Именно такова армянская культура в своем историческом движении.

HAMLET A. GEVORKIAN - Remarks on the term “ancient or historical, nations”. - The term “ancient, or historical, nations” is used since the time of formation of the new classical philology in the 19th century. The term needs to be defined exactly, so in this paper the actual contexts of its use are considered, to explicate the term and to exclude its irrelevant uses, often emotionally motivated by psychological associations.

In the process of formation of the new classical philology and the comparative-historical linguistics the philosophy of romanticism played an important part, rousing interest for the past history of nations and for investigations of the ancient periods in evolution of the living languages. Just by the attribute – “Living Indo-European language witnessed from the ancient times” – an interest was roused to the Armenian language and to the past history of its bearer – the Armenian people.

Philological studies, in proper sense, deal with literary monuments, especially of ancient and medieval times. The task in hand is the textual criticism of a literary monument, i.e. attainment of understanding (*Verstehen*) of the text, clarification and specification of the meaning of words, phrases, set expressions, sentences and propositions, their interpretation, for the sake to give feasibly adequate translation of the text into a contemporary language, using its divergent linguistic means and disparate semantics.

It is not easy to solve this problem. Each culture, and literary monument of culture, is unique. And it gains its meaning when it is placed in the context of a definite culture and definite historical time. Only in this case it becomes attainable for understanding, interpretation, and translation. That is why the **philological** studies in the 19th c. evolved into **historical-and-cultural**, **historical-and-philological** investigations in special philological disciplines. Understanding, interpretation, and translation of literary monuments made possible to solve the “reverse problem”: to use them as the means for historical reconstruction of the wholeness of culture of the people -

bearer of the culture. These problems are demonstrated on the model of the Armenian language: there is a thick layer in it, where the data are accumulated about the peoples with which the Armenian people communicated for ages, since the ancient times. Among them are some tribes and peoples which have quitted the historical area (Phrygians, Lydians, Sumerians, Syrians etc.), and also peoples having no letters (such as Kipchaghs). The Armenian literary sources and the data accumulated in the Armenian language are important components for historical reconstruction of the wholeness of their culture.

In the 19th c. philology, of course, the monuments of the Graeco-Roman literature were translated in the first place. But the considerations which had motivated the interest to such choice, roused an interest also to the Armenian literary culture (and, respectively, to the history of Armenia and the Armenian culture). In this paper some inducements are noted, which stipulated this interest. In the first place, there are a considerable number of Armenian translations of literary monuments of the antiquity, Hellenism, Graeco-Roman, early-Christian literature, and so forth; many of them are unique, and many others are equal to original texts, because these are the only examples of important writings of eminent representatives of history, philosophy, theology of the epoch. Apart from this, the Armenian literary legacy includes original writings in all branches of ancient and medieval learning from grammar to mathematics, cosmography, and theory of calendar, writings in history of Armenia, of Christianity, and "universal history". This literature is of great importance for historical-comparative research, without which the philological disciplines cannot manage. At last, there are ample and plentiful Hermeneutical works: interpretations of classical writings in philosophy, logic, theology, and of Bible, of its some earliest texts, maintained only in these Armenian translations. So, it was quite natural, that into new-European languages (into the German, French, English et al.) nearly all this vast-volume literature was translated. Translators were eminent representatives of philology in 19-20th cc. who had learned and excellently knew the Armenian literary language and, as a pre-condition for adequate translation, the Armenian history and culture. This enormous "library" of the works, translated from the Armenian (with their comments, interpretations, etymology, indexes etc.), became a constituent property, the part and parcel of the European philology itself.

Literary monuments imparted an important nuance to their bearer, to the attribute "ancient, or historical, nation." A people, having his own letters and literature in all branches of the learning of the epoch, gained recognition to be a part of the "civilized world," a certain "universe of civilization," and beyond the bounds of it was a barbarian expanse, even thought of as "non-world" (S.Averinzev's term). The Armenian nation, having created its own letters and literature, entered into dialogue with the peoples of the "civilized world" on equal terms and thus was recognized by them. Opposition to Sassanide Persia and Zoroastrianism determined its orientation to the Graeco-Hellenistic cultural world, where it entered and continuously stayed with its literary culture, as well as its history, its fine arts and sciences, its architecture and construction art...

Finally, in the paper a thesis is formulated which outlines the limits of the applications of the concept "ancient, or historical, peoples" (in formulations A.Kroeber's terminology is used: "the culture of [more] retarded society" and "the culture of [more] advanced society"):

– The culture of [more] retarded societies is re-productive, and it ought to be re-productive to survive as such; it ought to use its potentialities for preserving, defending, and reproducing its traditional customary-law forms;

the culture of [more] advanced societies is productive; and it ought to be productive to survive as such; it ought to and is able to expand its potentialities in new forms, and, expanding, it is able to fill all the niches of 'cultural space'.

Just such is the Armenian culture in its historical evolution.